

* *

Բ. իշխանեան և Արսէն Տէրտէրեան կը ներկայացնեն ռուսահայ նորագոյն քննադատութեան հոսանքը: Արսէն Տէրտէրեան ինծի համար բոլորովին նոր յայտնութիւն մըն էր, մինչ իշխանեանի վրայ ինչ որ կը յիշեմ անգամ մը առիթ ունեցեր եմ խօսելու¹: Իրմէ ուշադրութիւնս գրաւած էր եւրոպական բառերու յաճախադէպ կիրառութիւնը՝ նոյն իսկ հոն ուր հայերէն բոլորովին յարմար բառն ունինք: Ասկէ դուրս նա ինծի լաւ պատրաստուած միտք մը երեւցած էր, թէ և քիչ մը անձուկ, միակողմանի, չըսելու համար մասնագիտական:

Ինչ չափով և ինչ պարագաներու մէջ պէտք է հիւրընկալել օտար բառերը մեր լեզուին մէջ: Ահաւասիկ հարց մը որուն վրայ այնքան զեղեցիկ խօսքեր է Միքայէլ Վարանդեան իր Հոսանքներ խիստ շահեկան հատորի ներածութեան մէջ: Նախնիք, կը հասկնամ շատ հին նախնիք, բարի դասականները, մեզի տուած են արդէն չափը այս մոլութեան: Ես անոնցմէ չեմ որ ջրավախութիւն կ'ունենան օտար բառի մը դիմաց, յոյն կամ հռոմէական, կամ նոյն իսկ արդի լեզուներէն, արեւելեան կամ արեւմտեան, ռուս, թուրք, ֆրանսացի, գերմանական: Բայց անոնցմէ ալ չեմ որ հայերէն գիրերով ու բերականութեամբ ուրիշ լեզուի մը մէջ կը գրեն,

ոչ թէ մէկ լեզուի մէջ, այլ քանի մը լեզուի մէջ՝ ռուս, գերմանացի, հայ, գաղղիացի, ուսկէ բան մը հասկնալու համար մարդ պէտք է առ նուազն չորս լեզու գիտնայ, Այս տեսակ գրող մը միայն Բ. իշխանեան է. տեսէք. «Հասարակական կենսունակ, պրօգրեսիւ կաթեգորիայի — լիբերալ բուրժուացիայի — սօցիալական իմպերատիւներն են սրանք, որ նրա խորապէս գիտակցող իդէօլոգները վճռականօրէն ուղղում են կենսագրութիւն, բեքրեսիւ դասի — պահպանողական կղերականութեան դէմ»:

Ինչ լեզուով են այս տողերը:

Իշխանեան յստակ տեսութիւններ ունի համադրութեանց դասաւորութեան ու նկարագրերին վրայ: Կ'երեւի թէ նա հիմնովին կը ճանչնայ իմաստասիրական պատմութիւնը բոլոր հոսանքներուն ու շարժումներուն որ կը յայտնուին այլ և այլ դասակարգերու մէջ: Եւ ճշդուած դրութիւն մը իր բոլոր խտտութեամբ կ'ուզէ գործադրել մեր մատենագրութեան վրայ, ուսկէ սոյն հատորին մէջ միայն երկու անձնաւորութիւն քննութեան առած է, Ռ. Պատկանեան և Ս. Շահապիզ, փնտրելով իրենց բանաստեղծութեանց մէջ ճիշդ բնոյթը իրենց նկարագրին:

Շարայարիփ

1. Տես Բզմ. 1906 էջ 44:

2. Հասարակական Գաղափարները, էջ 66:

Ք Ո Վ Ա Ն Ո Պ Ա Կ Ո Ւ Թ Ի Թ Ն

Գրականութիւնը	էջ 49
ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ. — Ես պիտ' երթեմ գիշերին մէջ. Թրգմ. Ղազարեան	
Հ. Ա.	50
Տ. — Հանգիստ հոգւոյ Հ. Դուսիթ Վ. Նազարեթեան	51
ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ. — Գիր կամ պահպանակ հնախօսականին առիթով	58
ԿՍՄԴՈՆ ՊՈՆԻԷ. — Մըշիւններու և	

մեղունքներու զգացողութիւնը. Թարգմ.	էջ 63
Փիլոսոփան Շապուհ	63
ԱՆԴՐԵԱՆԻԱՆ Հ. Ն. — Լէօ	69
ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. — Պայքար մը Հայրենիք գաղափարին շուրջ	75
ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ. — Նոր երգեր Թրգմ. Ղազարեան Հ. Ա.	23
ԲԹԻԿԵԱՆ Հ. Ղ. — Արփիար	89
ԳԻՐԵՐ ու ԹԵՐԹԵՐ	98